ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԶՐԱՀԱՏԱՆԿԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՄԱՐՇԱԼ ՖԵԴՈՐԵՆԿՈՅԻ ԵՎ ԶՐԱՀԱՏԱՆԿԱՅԻՆ ԵՎ ՄԵՔԵՆԱՑՎԱԾ ԶՈՐՔԵՐԻ ՌԱԶՄԱԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ԳԵՆԵՐԱԼ ԲԻՐՅՈՒԿՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Հաղորդում եմ, որ արտասահմանի հայ հավատացյալների միջոցներով կառուցված է «Մասունցի Դավիթ» երկրորդ տանկային շարասյունը և հանձնված տանկային զորքերի գեներալ մայոր Գովչենկոյի և տանկային զորքերի գեներալ լեյտենանտ Կիրիչենկոյի Գվարդիական տանկային միավորումներին: Տանկերի մի մասն ուղարկված է համալրելու փոխգնդապետ Վոյնովսկու տանկային, զորամասը, որտեղ գտնվում են «Մասունցի Դավիթ» առաջին տանկային շարասյան տանկերը:

Բանակի զրահատանկային զորքերի հրամանատար եվ զրահատանկային զորքերի մարշալ ՖԵԴՈՐԵՆԿՈ.

Կարմիր Բանակի զրահատանկային եվ մեքենացված զորքերի ռազմախորհրդի անդամ տանկային զորքերի գեներալ գնդապետ Ե. ԲԻՐՅՈՒԿՈՎ: